Մասքատի, Շապարանի եւ Ալբաբ[1] քաղաքի ժողովուրդը։ Ապա բնակիչք փակեցին նորա յետեւից դռները. նորան պատահեցաւ Խաքանը իւր հեծելազօրով, որ անցած էր Բալանջար[2] գետը, եւ Սալման սպանեցաւ 4000 մուսլիմների հետ. նոցա պատերազմական կոչը սովորաբար լսելի էր ճակատամարտի դաշտում։ Սալման Ի. Ռաբիյա առաջինն էր, որ դատաւոր նշանակեցաւ Կուֆայում (Բաղդատում) եւ մնաց այստեղ 40 օր առանց դատ ուներալու՝ պատմողը աւանդել է ինձ Օմար Ի. Խատտաբի ասելով։ Սալմանի եւ Պատայբայ Ի. Մուսլիմի մասին ասում է Իբն Ջուման Ալբահլի՝

Մենք երկու գերեզման ունինք. մէկը Բալանջարում,
Միւսը Զինաստանում. ի՞նչ գերեզմաններ ...
Որ Զինաստանումն է՝ (հերոսի) յաղթութիւններով է ծածկուած,
Իսկ այս՝ թանձր անձրեւը կ՚ողողէ։

Սալմանի հետ էր Բալանջարում Քարզայ Ի. Կաբ Ալանսարի, որ բերեց նորա մահուան բօթը Օսմանին։ Երբ Հաբիբ նուաճեց Հայաստանի մի մասը, նա գրեց դորա մասին Օսման Ի. Օֆֆանին, եւ նորա գիրը հասաւ նորան. տեղեկացնելով նորան Սալմանի մահուան մասին, նա կարծում էր, թէ Օսման նորան նշանակելու է կառավարիչ ամբողջ Հայաստանի վերայ. բայց ապա տեսաւ, որ նա նորան կարգում է Ասորիքի եւ Միջագետքի սահմանագլխում զինուոր, ի նկատի ունենալով նորա ընդունակութիւնն այսօրինակ յանձնարարութիւններում, որ նա նորան սովորաբար տալիս էր։ Իսկ Հայաստանի սահմանագլխում կառավարիչ նշա-

---

1 Դերբենդ։

2 Վառաչան քաղաք Հոնաց (Կեղծ Խորեն.) հմմտ. եւս Մ. Կաղանկատուացի Բ. խթ.։ Ibn Xordadbeh։ Խազարաց քաղաքներն են՝ Խամլիջ, Բալանջար եւ Ալբայդայ (124)։